ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան՝

Համաձայն ՀՀ կառավարության 2010թ-ի մարտի 4-ի N39-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>>-ի 4-րդ կետի՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

Կից ներկայացնում եմ խորհրդի որոշման քաղվածքը:

ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>>

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝ Ռ. Իսրայելյան

14. 06. 2019թ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
Մուտք թիվ 09636-19
14. 06. 19թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019թ-ի հունիսի 14-ի նիստի թիվ 40 արձանագրությունից.

Օրակարգում. 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Հիմք ընդունելով <<ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը>> հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում, 2019թ.-ի օգոստոսի 9-ին, ժամը 14^{00}-ին :
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոցում>>՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 02.07.2019թ.-31.07.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 27.06.2019թ.-ին, երկրորդը՝ 02.07.2019թ.-ին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի քարտուղար Լ.Արտոյանի վրա:

ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահ՝ Ռ. Իսրայելյան

14.06.2019թ.